Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ ԿԳՄՄՆ <<Հրազդանի Լենոն Խեչոյանի անվան թիվ 10 ավագ դպրոց>> ՊՈԱԿ-ի Մաթեմատիկա (8 դասաժամ) , Պատմություն (8 դասաժամ) և ՆԶՊ (11 դասաժամ) առարկաների ուսուցիչների թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձև 1), մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել կամ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են մինչև սույն թվականի սեպտեմբերի 12-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ն, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա սույն թվականի սեպտեմբերի 17-ին, ժամը 15^{00}-ին, ՀՀ ԿԳՄՄՆ <<Հրազդանի Լենոն Խեչոյանի անվան թիվ 10 ավագ դպրոց>> ՊՈԱԿ-ում: Հասցեն՝ ք. Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, Մարշալ Բաղրամյան 5-րդ փողոց,9 շենք:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 0223-3-37-20 հեռախոսահամարով: